ՀԱՅԵՐԻԱ ՀՅՈՒԲՇՄԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



FUNDAÇÃO



CALOUSTE GULBENKIAN

Գիրքը հրատարակվել է
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

HEINRICH HÜBSCHMANN

ARMENISCHE GRAMMATIK

ERSTER TEIL

ARMENISCHE ETYMOLOGIE

1972

GEORG OLMS VERLAG
HILDESHEIM · NEW YORK



ՀԱՅՆՐԻԽ ՀՅՈՒԲՇՄԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 809. 198. 1
ԳՄԴ 81. 2Հ
Հ 655

Թարգմանությունը՝ **ՀՈՒՆԱՆ ԱՇՈՏԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ**
Խմբագիր՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅՆՐԻԽ ՀՅՈՒԲՇՄԱՆ

Հ 655 Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանությունը, Եր.: ԵՊՀ հրատ.; 2003, 604 էջ:

Գերմանացի նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանը (1848-1908) առաջինն ապացուցեց, որ հայոց լեզուն, պատկանելով հնդեվրոպական ընտանիքին, ներկայանում է իբրև ինքնուրույն, անկախ ճյուղ: Նա հեղինակ է մի քանի տասնյակ հայագիտական ուսումնասիրությունների:

Հյուբշմանը նախատեսել էր ստեղծել նաև հայերենի քերականությունը՝ երեք հատորով. առաջին հատորում՝ բառերի ստուգաբանությունը, երկրորդում՝ բառապաշարը՝ արմատական բառեր, վերջածանցներ և նախածանցներ, երրորդում՝ հնչյունաբանությունը և ձևաբանությունը:

Ու թեև ավելի քան քառորդ դար նա զբաղվեց հայագիտության հարցերով, սակայն կարողացավ ավարտել միայն «Հայերենի ստուգաբանություն» հատորը, որտեղ ընդգրկված է շուրջ 2000 բառ (1971 հասարակ անուն և 217 հատուկ անուն):

Հրատարակչությունը նպատակահարմար է գտել ստուգաբանությունները տպագրել պատճենահանման եղանակով:

Հ 4602020100 / 704 (02) 03 2003 ԳՄԴ 81.2Հ

© Համալսարանի հրատարակչություն, 2003 թ.
ISBN 5-8084-0517-3
© Թարգմանչի համար. 2003 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Առաջաբան	VII
Ծանոթագրություններ	1-8
Ա. Տառադարձում	1-2
Բ. Հապավումներ	3-8
ՄԱՍ I	
Պարսկական փոխառությունները հայերենում	9-280
Հատված 1. Պարսկական անուններ	17-91
Հատված 2. Պարսկերեն բառեր	91-259
Հատված 3. Նոր պարսկերեն և արաբերեն բառեր	259-280
ՄԱՍ II	
Ասորական փոխառությունները հայերենում	281-321
Հատված 1. Ասորական անուններ	288-299
Հատված 2. Ասորերեն բառեր	299-321
ՄԱՍ III	
Հունական փոխառությունները հայերենում	322-391
Հատված 1. Հունական անուններ	333-336
Հատված 2. Հունարեն բառեր	336-389
Ֆրանսերեն բառեր	389-391
ՄԱՍ IV	
Կասկածելի ծագում ունեցող փոխառությունները հայերենում	392-398
ՄԱՍ V	
Բուն հայերեն բառեր	399-504
Հավելված	505-520
Բառացանկ	521-573
Ուղղումներ	574-575

ԱՌԱՋԱԲԱՆ

Հին դարերում հյուսիսարևմտյան Առաջավոր Ասիան բնակեցնող բազմաթիվ ժողովուրդներից գրեթե միայն հայերն են, որ մինչև օրս պահպանել են իրենց ազգությունն ու լեզուն՝ ոչ թե հեշտ ու հանգիստ խաղաղ գոյատևմամբ, այլ ներքին և արտաքին տևական կռիվների պայմաններում, և ի հեճուկս այն բազում հետապնդումների, որոնք հաճախ առավել արյունահեղ ու անողոք էին լինում, քան նրանք, որոնց հանդիսատեսն է եղել Եվրոպան վերջին տարիներին: Դա թերևս պետք է վերագրել ցեղի հատկանիշներին, գուցե և աշխարհագրական, պատմական ու կրոնական հանգամանքներին, որ հայերը, չնայած անակնկալ ճակատագրերին, կարողանում էին այդքան երկար դիմանալ, բայց հաստատ է այն, որ նման հնամենի, աննկուն, իր դավանանքին հավատարիմ, ազգային հպարտություն և մշակույթ ունեցող ժողովուրդն արժանի է գիտության և բարեկիրթ աշխարհի ուշադրությանը, մանավանդ որ նա մոտ է կանգնած մեզ որպես հնդեվրոպական ցեղի մի ճյուղ՝ իր ծագումով և որպես քրիստոնեության կողմնակից՝ իր հավատքով: Ահա՛ այդ ժողովրդի լեզուն, որի վրա հարկ է հրավիրել մեր հետաքրքրասիրությունը:

Հայոց լեզուն, նախքան մեր թվարկության 5-րդ դարը, գրավոր ամրակայված չի եղել, ուստի և անհայտ է մնացել իր վաղնջական փուլերում՝ ընդհուպ հույներից ու հռոմեացիներից ավանդաբար անցած անձնանուններն ու տեղանունները, որոնք մասամբ սերում են նաև պարսկերենից: Եթե Հայաստանում վաղ շրջանում որևէ բան է գրվել, պետք է որ հայ գրի բացակայության պատճառով գրված լինի օտար, այսինքն՝ պարսկական, ասորական կամ հունական գրով ու լեզվով, այն դեպքում, երբ այդ երեք գրատեսակներից ոչ մեկն էլ պիտանի չէր հայոց լեզվի վերարտադրու-

թյան համար: Միայն մեր թվարկության 5-րդ դարի սկզբին Մեսրոպը հայտնագործեց հայ գիրը[1], և եթե ուզում ես հավատ ընծայել հայերենի այբուբեն ստեղծելու վաղեմի փորձերի վերաբերյալ հայերի կողմից տրվող հաղորդումներին, ապա պետք է նաև հավատաս նրանց, երբ նրանք հավաստիացնում են, որ այդ փորձերը լիովին ձախողվել են: Հետևաբար Մաշտոցից առաջ չի եղել ազգային լեզվով հայ գրականություն, որը, ավելի շուտ, հնարավոր է դարձել միայն Մեսրոպի շնորհիվ, այն հիմնադրվել է նրա ու կաթողիկոս Սահակի (մահացել է 439 թ.) կողմից, և որի ակունքները հասնում են ոչ ուշ, քան մինչև 5-րդ դարի առաջին կեսը:

Հայ գրականությունն իր ստեղծման համար երախտապարտ է Սահակի և Մեսրոպի՝ իրենց ժողովրդի համար քրիստոնեական դաստիարակության սեփական աղբյուր ստեղծելու և դրանով նրան Պարսկաստանից ու Ասորեստանից հոգևոր առումով անկախ դարձնելու ջանքերին[2]: Այդ նպատակին նրանք փորձում էին հասնել հայ գրի ստեղծումից անմիջապես հետո քրիստոնեական պատշաճ ստեղծագործությունների թարգմանությամբ, և նրանք հաջողությամբ հասել են դրան իրենց անխոնջ եռանդի և բազում աշակերտների աջակցության շնորհիվ: Քանզի, ըստ տեղեկությունների, դեռևս մեր թվարկության մոտավորապես 450 թվին հունարենից և ասորերենից թարգմանված գրքերի թիվը կազմել է ավելի քան 600 (Euseb. Chron. Venedig, 1818, I, էջ XI): Եթե նույնիսկ այդ թվաքանակը 450 թվականի համար չափազանցված է, բայց և այնպես հաստատված է, որ 5-րդ դարի վերջերին Հայաստանում կար հարուստ գրականություն, որը գործում էր այն ոգով, որով այն հիմնել էին Սահակն ու Մեսրոպը: Այդպես էին թարգմանվել, օրինակ, Աստվածաշունչը[3], Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը» և «Քրոնիկոնը», Փիլոնի երկերը, Արիստիդեսի «Ջատագովությունը», Հովհան Ոսկեբերանի քարոզներն ու մեկնությունները, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը», Սևերիանոս Գաբաղացի եպիսկոպոսի «Քարոզները», Կյուրեղ Երուսաղեմացու «Կարգադրություն»-ները, Եփրեմ Ասորու ստեղծագոր-

1) Տե՛ս ստորև, էջ 323, Ծանոթ. 1:
2) Տե՛ս ստորև, էջ 282, 323:
3) Տե՛ս ստորև, էջ 284, 285:

ծությունները[1], Իգնատիոսի «Նամակները»[2], Աբանաս Մեծի, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Սքանչելագործի, Գրիգոր Նյուսացու երկերը և այլն: Աշխարհիկ գործերից՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը», Կեղծ-Կալիսթենեսի «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը», Արիստոտելի փիլիսոփայական գաղափարները և այլն: Միևչդեռ թարգմանական այս գործունեությունը ծաղկում էր նաև հետագա դարերում, և ժամանակի ընթացքում այն երևան բերեց այնպիսի մեծածավալ գրականություն[3], որի նշանակությունն աստվածաբանության, եկեղեցու պատմության և հումանական բանասիրության համար այժմ ավելի ու ավելի շատ է գիտակցվում և արժեքավորվում: Նրա կողքին հենց սկզբից կազմավորվեց գրական մի այնպիսի գործունեություն, որը, սակայն, սահմանափակված մնաց հիմնականում աստվածաբանության և պատմության բնագավառում: Մենք նրան ենք պարտական մի կողմից աստվածաշնչային գրքերի, վիճաբանական երկերի (օր. Եզնիկի «Եղծ աղանդոց»), քարոզների, ճառերի, նամակների, աղոթքների, հոգեվոր երգերի և նման շատերի բազում մեկնությունների համար, մյուս կողմից՝ այնպիսի պատմական ստեղծագործությունների չընդմիջվող շարքի համար, որոնք թեև գրեթե բացառապես սեփական ժողովրդի պատմությունն են արծարծում, սակայն մյուս ժողովուրդների հանդեպ նրա ունեցած բազմազան հարաբերությունների առումով կարևոր նշանակություն ունեն նաև պարսիկների, բյուզանդացիների, արաբների, սելջուկների և մոնղոլների պատմության համար: Նվազ կարևորություն ունի մասամբ ինքնուրույն, մասամբ թարգմանություններից բաղկացած աշխարհագրական, աստղագիտական, իրավաբանական ու բժշկական գրականությունը, որն էլ հիմնականում պատկանում է միայն ուշ միջնադարին: Պոեզիան ունեցել է միայն քիչ ու աղքատիկ զարթոնք: Այստեղ նկատի չի առնվում ժամանակակից հայերի հսկայածավալ, մեծ մասամբ՝ գիտական գրականությունը[4]:

1) Տե՛ս ստորև, էջ 285:

2) Տե՛ս ստորև, էջ 285:

3) Այս մասին տե՛ս *Գ. Զարբհանալյան*, Մատենադարան հայկական թարգմանության նախնյաց (IV- XIII դդ.), Վենետիկ, 1889, էջ 1-764 (աշխարհաբար):

4) Հին գրականության մասին տե՛ս Կ. Ֆ. Նոյման, Հայ գրականության պատմության փորձ ըստ Մխիթարյանների ստեղծագործությունների, Լայպցիգ, 1836, *Գարեգին Զարբհանալյան*, Հայ գրականության պատմություն, Վենետիկ, 1878 (աշխարհաբար):

Եթե անտեսենք առանձին հեղինակների արտահայտչական ու ոճական զանազանությունները, բնականաբար նաև Դիոնիսիոս Թրակացու, Արիստոտելի և այլոց թարգմանիչների *կամայականությունները, ապա հայ գրականության* լեզուն իր հնչյուններով, ձևերով ու շարահյուսությամբ ի սկզբանե մեզ է ներկայանում որպես միատարր, այսինքն՝ առանց բարբառային տարբերությունների: Բայց քանի որ այդ լեզվով գրված առաջին գործերը, առաջին հերթին՝ Աստվածաշունչը, հետագայի համար օրինակելի են համարվել, ապա շատ թե քիչ եղած բարբառներից և ոչ մեկը չէր կարող իր խոսքն ասել գրականության մեջ, և այդպես էլ այդ գրականությունը, հարատևելով ու փոփոխության ենթարկվելով ժողովրդախոսակցական լեզվում, մեռյալ լեզվի պես մինչև մեր օրերը մնաց հայ գրականության միատարր և անփոփոխ «դասական» լեզուն: *Այն, որ այդ լեզուն հարատևել* է, և թե ինչպես է հարատևել ժողովրդի մեջ, մենք տեղեկանում ենք առաջին հարյուրամյակների, այն ժամանակների (թերություններով մեզ փոխանցված և վատ հրատարակված) տեքստերում ի հայտ եկող միայն փոքրաթիվ և ոչ միշտ հուսալի հետքերից, դրա հստակ պատկերը մեզ ներկայանում է միայն գրականության միջին շրջանի հարուստ (բժշկական, իրավագիտական, երկրագործական) աշխատություններից (*Մխիթար Հերացի*, Ջերմանց մխիթարություն, 1184 թ., Աշխարհացույց, 12-րդ կամ 13-րդ դար, Ասորա-հռոմեական դատաստանագիրք, «Անտիոքի ասիզներ» *թարգմանված մինչև 1265 թ. և այլն*) *հետագայում* կըրկին խամրելու և լիակատար ու հստակ ի ցույց դնելու իրեն միայն մեր դարում, երբ այդ համաժողովրդական լեզուն շարունակական զարգացումից հետո և ոչ առանց հին գրական լեզվի՝ գրաբարի ազդեցության վերածեց ու դարձավ աշխարհաբար գրական լեզու: Նրա կողքին հիմա ի հայտ են գալիս բազմաթիվ բարբառներ, որոնք մեզ հուշում են գրաբար և աշխարհաբար լեզուների նկատմամբ նրանց ունեցած հարաբերությունների հարցը: Որոշ գիտնականներ նրանց մեջ ենթադրաբար տեսել են հին հայկական բարբառները շարունակողներին՝ առանց սակայն այդ ենթադրության համար հիմնավոր պատճառ բերելու: Այդ բոլոր բարբառները, որքան էլ նրանք տարբեր են իրարից, ինձ թվում է, իրենց բնորոշ հատկանիշներով համընկնում են իրար և աշխարհաբար գրական լեզվին և, հետևաբար, վեր-

ջինիս հետ անդրադառնում են մեզ հայտնի գրաբարին[1]:

Սակայն ցայժմ, որքան հայտնի է նաև ինձ, չի փաստվել և ոչ մի բառ, որն իր հնչյուններով (և բանն էլ ամենից առաջ հենց դա՛ է) պետք է հիմնվեր մեկ այլ ձևի, քան առկա գրաբարյան ձևի վրա: Անշուշտ կարող էին 5-րդ դարում գոյություն ունենալ հայերեն բարբառներ, բայց պարտադիր չէ, որ նրանք խիստ տարբեր եղած լինեին և կարող էին ի հայտ գալ գրական լեզվում կամ էլ այն առաջ մղող ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես հին հունարեն բարբառները՝ *Κοινή*-ում: Բայց արդյո՞ք դա է իրողությունը կամ էլ արդյո՞ք որևէ աշխարհաբար բարբառ չի վերագրվում այլևս չպահպանված հին հայերեն բարբառի, ինչպես հունարենում ցակոներենը լակոներենին, կարող է հարկավ պատասխան տալ միայն ժամանակակից բարբառների այնպիսի հիմնավոր հետազոտությունն ու համեմատությունը, ինչպիսին չի ձեռնարկվել ցայժմ[2]:

1) *Ժամանակակից հայերենի կազմաբաժանումներն են՝* հոգնակի թվի կազմությունը *-եր, -ներ* մասնիկներով, կրավորականի կազմությունը *վ* ածանցով (*լս-եմ*-ի կրավորականը՝ *լս-վ-իմ*), անկատար ներկայի (արևմտահայերեն) կամ ապակատարի կազմությունը, արևմտահայերենում *գու, գը, գ*, Լեհաստանում խոսվող հայերենում՝ *գի, գ*, արևելահայերենում՝ *կու, կը* առաջադիր մասնիկով, որը սակայն բացակայում է Ագուլիսի բարբառում, պատճառականի կազմությունը՝ *ցն-(եմ)* ածանցով գրաբարի համար՝ *ցուցանե-(եմ)* կամ *ուցան-(եմ)*, *որ* հարաբերականի գործածությունը որպես շաղկապ, *զ* նախդրի խնդիրը որոշյալ հայցականում, *ա* ձայնավորի հաճախակի սղումը հատկապես միջին վանկերում: Այս երևույթներից շատերը փաստելի են դեռևս 12-13-րդ դարերում և, հետևաբար, մասամբ վերագրվում են էլ ավելի հին ժամանակների: Դրանք բոլորն էլ կան Անտիոքի ասիզներում (*գու-ն*, օրինակ, էջ 11-ում և 13-ում): Բացի դրանցից, նրանք ցուցաբերում են նաև բարբառային յուրահատկություններ, մեծ մասամբ Մխիթար Հերացու մոտ, որտեղ միայն որոշյալ հայցականն է դեռևս գործածվում *զ*-ով, իսկ *գու-ն*, ըստ երևույթին, դեռ ի հայտ չի գալիս, ինչպես նաև Աշխարհացույցում, որտեղ հայցականում դեռևս գործածվում է *զ-ն*, *գու-ն* չկա, իսկ *-եր*-ով հոգնակին հազվադեպ է կիրառվում: *Բայց ես չեմ կարող որևէ հիմնավորում գտնել այդ ենթամասնություններում՝* այսօրվա բարբառները տարաբաժանելու գրաբարից:

2) Հմմտ. այնուհանդերձ Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (դժբախտաբար աշխարհաբար գրված) գերազանց աշխատությունը, Վիեննա, 1866 (ժողովրդախոսակցական հայերենի պատմությանը վերաբերող խորացված հետազոտությամբ), այնուհետև՝ Հանուշ, Լեհաստանի հայերի լեզվի մասին (լեհերեն), Կրակով, 1886, և նրա հոդվածները՝ հայերենի բարբառագիտության վերաբերյալ, WZKM. հ. 1, 2 և 3, որոնք ընդօրինակելի ձևով ճշգրիտ տալիս են արտասանությունը (լատինատառ) և բառանյութը, Թոմսոն, «Լեզվաբանական հետազոտություններ (Ախալցխայի բարբառի մասին)», Պետերբուրգ, 1887 և «Թիֆլիսի արդի հայերենի պատմական քերականություն», Պետերբուրգ, 1890 (երկուսն էլ ռուսերեն), Սարգիս Սարգսյանց, «Ագուլիսի բարբառը», Մոսկվա, 1883 (աշխարհաբար) և այլն:

Հայ դպրության անկումից և գրականության այլակերպումից դարեր հետո, վերջերս, հատկապես Մխիթարի (1676-1749) և նրա կողմից Վենետիկի մոտակայքի Սուրբ Ղազարում (հետագայում նաև Վիեննայում) հիմնադրված Մխիթարյանների միաբանության շնորհիվ Հայաստանը վերստին կապի մեջ մտավ եվրոպական մշակույթի հետ, և, նրանից արգասավորված, երկրում զարթոնք ապրեց նոր հոգևոր կյանքը, և հույս կա, որ այդ կյանքը, չնայած քաղաքական հարաբերությունների անբարենպաստությանը, անշեղորեն կշարունակի իր հարաճուն ուղղությունը: Բայց միաժամանակ հայոց լեզուն ու գրականությունը նաև դրանով են մերձեցել եվրոպական գիտությանը և ժամանակի ընթացքում դարձել արդի գիտական հետազոտությունների առարկան՝ նրանցից լույս ստանալով ու նրանց վրա լույս սփռելով: Թեև Մխիթարյաններից առաջ էլ հայերենը գործածվել է Եվրոպայում, և գրվել է հայկական երևույթների մասին, բայց իտալացիներ Ռիվոլայի, Պիրոմալիի, Գալանոսի[1] (17-րդ դարում), ֆրանսիացիներ Վիլլոդի, Լա Կրոզի, Վիլֆրուայի[2] (18-րդ դարում) և այլոց ուսումնասիրությունները մնացին մեկուսացած ու անազդեցիկ, և շուտով Մխիթարյանների աշխատությունները գերազանցեցին ու ստվերի տակ թողեցին նրանց[3]: Սա չէ այդ այրերի վաստակը հատուկ ներկայացնելու և արժեքավորելու տեղը, միայն պետք է ընդհանրապես նշել, որ նրանք, ամենևին չխոսելով նրանց՝ հայ ազգի դպրությանն ուղղված լայնածավալ գործունեության մասին, ոչ միայն հավաքել ու դրանով իսկ կործանումից փրկել են մեծաթիվ հայերեն ձեռագրեր, այլ նաև տպագրությամբ հանրամատչելի են դարձրել հայ հին գրականության գլուխգործոցները, որ նրանք տարբեր լեզուներով (նաև եվրոպական) հրատարակել են հայերենի քերականու-

1) Տե՛ս Նոյման, Փորձ կամ Հայ գրականության պատմությունը, էջ 241-245:

2) Տե՛ս Նոյման, անդ, էջ 273-275:

3) Բացառությամբ Գուլիելմոս և Գեորգ Վիստոն եղբայրների կողմից թարգմանված ու հրատարակված Մովսես Խորենացու «Պատմության» և սրան հավելագրված «Աշխարհագրության», Լոնդոն, 1736, ինչպես նաև Հ. Շրյոդերի «Գանձ Արամյան լեզվի», Ամստերդամ, 1711:

թյան գրքեր ու բառարաններ[1], մասամբ ակնառու աշխատություններում մշակել են հայ հնագիտությունը, քաղաքականության ու գրականության պատմությունը, հին ու նոր աշխարհագրությունը և այլն, և իրենց համընդհանուր գործունեությամբ ստեղծել այն հողը, որի վրա կարող է զարգանալ մի նոր «հայ բանասիրություն», որն էլ արդեն տվել է իր ընձյուղները: Նրանց օրինակին հետևեցին ոչ միայն բոլոր երկրների հայերը. աստվածաբանական, պատմական ու լեզվաբանական նկատառումներով հայոց ուսումնասիրություններին դիմեցին նաև եվրոպացի գիտնականները[2] և նրանց մեջ ներարկեցին գիտական ոգի ու մեթոդական ուսուցում, որոնց պակասի պատճառով բազում հայերի գիտական ձգտումները մինչև հիմա շատ թե քիչ շեղվել էին իրենց նպատակից:

Այն բանից հետո, երբ Բոպպի կողմից ճանաչվել և ապացուցվել էր հնդեվրոպական լեզուների կապը[3], անհնար էր հայոց լեզվի պարզ կառուցվածքի դեպքում շարունակել կասկածել, որ նա էլ է պատկանում լեզուների միևնույն ընտանիքին: Միայն թե շտապ առաջ անցան և այն ուղղակիորեն դասեցին իրանական լեզուների շարքին[4]:

Իրավամբը կամ հանիրավին կարող էր որոշվել միայն հընչյունային, հավաստի ստուգաբանության վրա հիմնված նկատառումներով: Մի քանի ճիշտ ստուգաբանություն արդեն (1711 թ.) տվել էր Շրյոդերն իր "Thesaurus linguae Armenicae" գրքում, էջ 45-47, ավելին տվեցին միայն ավելի քան հարյուր տարի հետո հետևյալ գործերը. Գեորգ Դպիր Պալատացի՝ Պարսկերենի բառարան հայերեն լեզվով՝ հրատարակված

1) Այդ թվում Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի կողմից 1836-1837 թթ. լույս ընծայված, գիտական նպատակների համար անփոխարինելի մեծ բառարանը հայերեն լեզվով (այն ժամանակներում հայտնի գրականության մեջ գործածելի բոլոր բառերով՝ բազմաթիվ գրական օրինակներով):

2) Ֆրանսիայում Սեն Մարտենը, Դյուլորիեն, Կարիերը, Գերմանիայում՝ Պետերմանը, Ա. ֆոն Գուտշմիդը, Ֆեթերը, Գելցերը, Շվեյցարիայում՝ Բաումգարթները, Անգլիայում՝ Քոնայբիրը, Վիեննայում՝ եվրոպական կրթություն ստացած Մխիթարյաններ Այտընյանը, Տաշյանը և այլք: Քերականների անունները տե՛ս հաջորդիվ:

3) Համեմատական քերականություն, Բեռլին, 1833:

4) Հմմտ. KZ. 23, 7, Պոլ դը Լագարդ, Հայկական ուսումնասիրություններ, էջ 191...:

Հակոբ Տյուզյանի կողմից, Կոստանդնուպոլիս, 1826[1], Պետերման՝ Հայոց լեզվի քերականություն, 1837, Վինդիշման՝ Հայերենի հիմունքները արիական հիմք լեզվում (Բավարիայի ակադեմիայի գիտական հոդվածներ, IV, 2), 1846, Գոշե՝ De Ariana linguae gentisque Armeniacae indole prolegomena, 1847, Լագարդ (Բյոտտիխեր)՝ Հայերենի բաղաձայնների համեմատությունը սանսկրիտի բաղաձայնների հետ (ZDMG. 4, 347...), 1850, նույն հեղինակը՝ Arica, 1851 և Հայերի նախապատմությունը, 1854, Շպիգել՝ Հուզվարեշ լեզվի քերականություն (էջ 186 ...), 1856, Ֆր. Մյուլլեր՝ Հոդվածներ հայերենի քերականության վերաբեյալ (Վիեննայի գիտությունների ակադեմիայի նիստերի նյութերը[2], Վիեննա, 1861-1865, հնչյունաբանության, հոլովման, խոնարհման, բառարմատի կազմության, ստուգաբանության մասին), Յուստի՝ Զենդերեն լեզվի ձեռնարկ, 1864, Ֆր. Մյուլլեր՝ Armeniaca I SWAW. 1865, Լագարդ՝ Հոդվածների ժողովածու, 1866, նույն հեղինակը՝ Նյութեր բակտրիական բառարանագրության վերաբերյալ, 1868, Պատկանյան՝ Հայոց լեզվի կառուցվածքը (ամսագիր՝ asiatique XVI), 1870, Ֆր. Մյուլլեր՝ Armeniaca II, 1870, III, 1871, IV, 1874, Հյուբշման՝ Հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի տեղի մասին (KZ. 23, 5-42), 1875: Այս աշխատությունների բովանդակած ստուգաբանության նյութերը Լագարդը հավաքել է իր «Հայկական ուսումնասիրություններ» գրքի մեջ (Գյոթինգեն, 1877) և ուշագրավ բացատրություն ունեցող հայերեն բառերն (մոտ 1100) իրենց ստուգաբանությամբ ի մի է բերել 166-188-րդ էջերում՝ այնուհետև հավելվածում իրեն հատուկ ձևով մանրամասն խոսում է իր լեզվաբան գործընկերների ու նրանց աշխատանքների մասին և թվային միավորներով «գնահատում» նրանց վաստակը: Եթե կարևորվել է այն, թե ով է առաջինը և ոչ թե այն, թե ով է իր նախորդներից անկախ[3] մշակել որևէ ստուգաբանություն, այդ թվերը սխալ են հենց

1) Հմմտ. ZDMG. 35, 178:

2) Այսուհետ՝ SWAW.:

3) Վինդիշմանն անկախ էր Պետերմանից, Բյոտտիխերը (ZDMG. 4)՝ Վինդիշմանից, տողերիս հեղինակը՝ Բյոտտիխերի «Arica»-ից ու «Հայերի նախապատմություն»-ից և այլն, տե՛ս KZ. 23, 6-7, Կենտրոնական գրական թերթ, 1879, սյունակ 844:

այդ տեսակետից, երբ մյուսներին է տրվել այն բարձր միավորը, որը բաժին էր հասնում վերը հիշատակված Գեորգ Դպիրին և Հակոբ Տյուզյանին, բայց, համենայնդեպս, «արժեքավորումը» միակողմանի էր և անարդար, նախ՝ քանի որ այն խարսխված էր այն սխալ տեսակետի վրա, որ ստուգաբանությունն ու լեզվաբանությունը նույնանում են, և ըստ այդմ յուրաքանչյուր լեզվաբան, ինչ ուղղությամբ էլ որ նա աշխատում է, պետք է գնահատվի իր գտած ստուգաբանությունների թվաքանակով միայն, ապա՝ քանի որ այդ արժեքավորումը նկատի չէր առնում, որ արդեն շատերի կողմից շահագործված ոսկեհանքում աշխատողն այլևս չի կարող գտնել այնքան ոսկեհատիկ, որքան առաջինն պրպտողը: Բայց եթե մենք անտեսենք այդ բանավիճական մասը, ապա արդարամիտ կլինի ընդունել, որ Լագարդն ինչպես վաղ հետազոտություններով, այնպես էլ հայերենի իր ուսումնասիրություններում ստուգաբանական նյութի հավաքումով ու դիտարկումով շատ մեծ վաստակ ունեցողն է հայերենի ստուգաբանության հարցում, եթե ոչ միակը: Այդպես չէ հայերենի հնչյունաբանության ու ձևաբանության և ցեղակից լեզուների նկատմամբ հայերենի կապերի արտահայտության հարցում: Ֆր. Մյուլլերը վերջերս հաջողությամբ պաշտպանեց և շրջանառության մեջ դրեց այն պարզունակ տեսակետը, որ հայերենը մի իրանական լեզու է: Այդ ընթացքում Լագարդն իր հոդվածների ժողովածուում, որտեղ նա (տե՛ս էջ 291) Փոքր Ասիայի բոլոր հնարավոր ժողովուրդներին *թյուրիմացաբար իրանցիներ* է դարձրել, *հայերի* վերաբերմամբ հանգել էր խճճված մի արդյունքի, որը նա ձևակերպում է հետևյալ խոսքերով (էջ 291-292). «Եվ այսպես հաստատվել է, որ հայոց գոյության հիմքերն ընկած են հնագույն ժամանակներում: Այդ ժամանակներին է վերագրվում իրանցիների մի տեղաշարժ, որը հեռավոր շրջանցումներով և բազում կռիվներից հետո հասել է Արարատյան դաշտ, և դրա համար էլ իրանական լեզվի սկզբնական կերպարն արդեն բազմիցս ինքնուրույն զարգացում է ունեցել, նույնիսկ այլակերպման է ենթարկվել: Բայց իրանական մի ջրաբերակային շերտ էլ է նստած այն երկու հնամենի լեռների վրա. պարթևները ողողում են Հայաստանը, այնտեղ հաստատում Արշակունիների թագավորությունը, լավագույն գավառն ամբողջությամբ վերցնում իրենց տիրապետության տակ և իրենց սե-

փական ունեցածից հայոց լեզվին տալիս իրանական բառերի՝ ցայտունորեն տարբերակվող մի զանգված: Ես կարծում եմ՝ չեմ սխալվում այն վստահության հարցում, որ ով ընդհանրապես լեզվական հոտառություն ունի (որը, անշուշտ, շատ հազվադեպ է լինում), կկռահի հայերենի երեք տարբեր բաղկացուցիչ մասերը»: Երեք բաղկացուցիչ մասերի բնորոշ հատկանիշները Լագարդն այստեղ չի մատնանշում, սակայն հավելվածներում (էջ 298-299) նա ուզում է «առնվազն մի քանի օրինակի հիման վրա ցույց տալ, թե ինչպես կարող են զանազանվել հայոց լեզվի տարբեր բաղկացուցիչ մասերը»: Դա արվում է հայերենում սանսկրիտի *khan* արմատակիր բառերի, հայերենի *կով, գավազան* և *խարազան* բառերի մասին մի քանի աղքատիկ ծանոթագրություններով, որոնցով ամենևին էլ չի ներկայացվում այն երեք բաղկացուցիչ մասերի տարբերիչ հատկանիշը, այլ տարբերակվում են միայն բառերի՝ հատկապես նույն կառուցվածքի բնագիր և պարսկերենից փոխառյալ բառերի երկու շերտերը[1], մինչդեռ վերևում հստակ տարբերակվում էին երեք շերտեր՝ «հայոց գոյության հիմքերը հնագույն ժամանակներում», նրա վրա շերտակալած «իրանցիների տեղաշարժը Արարատյան դաշտ» և այս «երկու հնամենի լեռների վրա էլ՝ իրանական ջրաբերակային շերտը»՝ պարթևականը կամ արշակունյանը: Ինչպես էլ Լագարդը պատկերացրած լինի այդ երեք շերտերն իր ենթադրությամբ, դրանք գոյություն չեն ունեցել և չեն հայտնաբերվել նաև հետագա հետազոտություններով: Նույնիսկ իր իսկ կողմից[2]: Քանզի երբ ես «Հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի տեղի մասին» իմ հոդվածում[3] (KZ. 23, 5-42, 1875) պարսկերենից փոխառյալ կասկածվող բառերն առանձնացրել էի բուն հայկականներից, վերջիններիս օգնությամբ ընդունել և նրանցով ցույց էի տվել հայերենին՝ որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձնահատուկ անդամի, իր տեղը՝ իրանականի և սլավո-լատվիականի միջակայքում, Լագարդն իմ կողմից «աշխարհին հայտնած սխալ հավաստումների» հան-

1) Տե՛ս իմ «Հայկական ուսումնասիրությունները», էջ 2-3:

2) Բակտրիական բառարանագրությանը վերաբերող իր նյութերում (1868, էջ 3-4) նա նկատում է միայն, որ ինքը նույնիսկ հայերենն է համարել «իրանական լեզվաընտանիքին պատկանող»:

3) Դրա հետ մեկտեղ հմմտ. նաև իմ Armeniaca-ն, KZ. 23, էջ 400-407:

րագումարային մերժումից հետո հայտարարեց («Հայկական ուսումնասիրություններ», էջ 206), որ «հայոց լեզուն բաղկացած է երեք բաղադրիչ մասերից՝ հայկազյանից, արշակունյանից (պահլավերենից), սասանյանից», այն հավելումով, որ «հայկազյանը միջին օղակ է մի կողմից իրանական լեզուների, հելլեներենի ու կիմրիերենի և մյուս կողմից՝ լիտվերենի ու սլավոներենի միջև, որ «հայկազյանները (հայերենի բաղկացուցիչ մասերը) պատկանում են նաև այն լեզվաընտանիքին, որի հնագույն ներկայացուցիչն է զենդերենը», որ «այն ամենը, ինչ պետք է ներկայումս (1877) իմացվի հայերենի տեղի մասին, 1851 թվականից ի վեր ուսուցանվել է իր կողմից, որ ինքը «1866 թ. ճանաչել է այդ լեզվի տարրաբաժանումը երեք շերտերի[1] և այլն: Դրան հակառակ, Symmicta-ում ասված էր. «Արդեն քանիցս[2] ես ուշադրություն եմ հրավիրել այն բանի վրա, որ հայերենում իրանական լեզվի տարբեր շերտեր են դարսված իրար վրա: Հայերենի ունեցած այն բազում բառերը, որոնք նույնանում են նոր պարսկերենի հետ, բոլորն էլ հայերենում փոխառյալ են[3] Արշակունիների ժամանակներից, ուստի և պետք է պահլավերեն լինեն[4]: Դրանք չեն կարող սասաներեն բառեր լինել, քանի որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, որը գալիս է հինգերորդ դարի կեսերից, դրանք արդեն սովորական գործածություն ունեն: Լուկուլլոսի ժամանակաշրջանում նրանք դեռևս չէին կարող համարժեք լինել հին հայկազերեն բառերին[5]. ենթադրել, որ 430 թ. հայկազերենը 250 թվից ի վեր այնպես է ներազդված եղել հայ Արշակունիներին թշնամաբար տրամադրված սասաններից, որ յուրաքանչյուր տասներորդ բառը կարող էր սասաներեն լինել. դա ենթադրելու ոչ մի շարժառիթ չեմ տեսնում

1) Բայց որ դրանք բոլորովին այլ բան էին, չի ասվում:

2) Այսինքն՝ 1866-ին «Հոդվածների ժողովածուում», իսկ 1877-ին՝ «Հայկական ուսումնասիրություններում», վերջինը տե՛ս էջ 208, հատված E:

3) Հմմտ. KZ. 23, էջ 8 և անդ, էջ 404 իմ այն դիտողությունը, որ «յուրաքանչյուր հայերեն բառ, որը լրիվ համընկնում է պարսկերեն համապատասխան բառի հետ, պետք է դիտարկվի որպես փոխառություն:

4) Ճիշտ է, որ Հայաստան են եկել մեծ թվով պարսկերեն տարրեր պարթևների, առավել քիչ՝ սասանների և նորապարսիկների ժամանակաշրջանում, տե՛ս ստորև՝ էջ 12-14: Բոլորը, սակայն, երբեք չէին կարող փոխառվել պարթևների ժամանակաշրջանում:

5) Ինչո՞ւ ոչ նրանք, որոնք վերցվել էին Լուկուլլոսից էլ շատ առաջ:

ես»[1]: Այս՝ առաջին անգամ Գիտնականների գյոթինգենյան ծանուցաթերթերում (1870, թողարկում 37, 38) տպագրված նախադասությունները վերստին արտատպվել են 1877-ին լույս տեսած Symmicta-ում՝ առանց լրացուցիչ ծանոթագրության: «Հայկական ուսումնասիրությունները» ըստ Symmicta-ի (էջ IV) տպագրվել են երկու անգամ. այս տեսքով նրանք լույս են տեսել 1877-ին Գյոթինգենի գիտությունների թագավորական ընկերության գիտական ուսումնասիրություններում: Հետևաբար այնտեղ (Symmicta-ում) հայերենն ունի միայն արշակունյան, այստեղ («Հայկական ուսումնասիրություններում»)՝ արշակունյան ու սասանյան փոխառյալ բառեր:

Լագարդը, ինչպես և վերջերս Ֆր. Մյուլլերը (Հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում, SWAW. 1877), կառչել է այն բանից, որ հայերենը, անկախ փոխառյալ բառերից, ըստ էության կա և մնում է իրանական: Իմ «Հայկական ուսումնասիրություններում»[2] (Լայպցիգ, 1883, էջ 5-7) ես ի չիք դարձրի այդ երկուսի տեսակետը, և երբ ես այնտեղ հավաստի մեկնաբանված բուն հայերեն բառերը (թվով 232) առադրել էի իրենց հնդեվրոպական ազգակիցների հետ, նրանց հիման վրա կազմել հայերենի հնչյունաբանություն, հավելվածում հակիրճ ներկայացրել նաև ձևաբանությունը, վերջի՛ն անգամ քըն-

1) Անշուշտ ոչ. ինչը սակայն չի բացառում, որ պարսկերեն բառերի մի քանակություն կարող էր փոխառվել 250 թվից հետո, իսկ 430-ի շրջանում անցած լինել սովորական գործածության: Իսկ ինչո՞ւ չեն հիշատակվում արշակունյան և սասանյան պարսկերենի միջև եղած տարբերությունները, որոնք ես փորձել եմ փաստել իմ «Պարսկական ուսումնասիրություններ»-ում (1895), և հենց նրանցով էլ ապացուցվում է, որ պարսկերեն փոխառյալ բառերի զգալի մասը (ոչ բոլորը) գալիս են պարթևների ժամանակներից: Հ. Գելցերը (Հայ աստվածաբանություն, էջ 101) գերագնահատում է Լագարդի՝ վերը բերված գրառումը:

2) Մինչ այդ լույս էին տեսել. Ֆր. Մյուլլեր, Armeniaca V, SWAW. 1878, իմ Armeniaca-ն՝ I, II, III, ZDMG. 35 և 36 (1881 և 1882), Պատկանյան, Նյութեր հայերեն բառարանի համար (ռուսերեն), 1882: -Տերվիշյանի աշխատության մասին՝ Armeniaca I: Հին հայերենի *ք*-ն, Վիեննա, 1877, տե՛ս իմ գրախոսությունը ZDMG.-ում, 30, 774-779: Այս աշխատության մասին ես հիշեցի նոր միայն՝ այս ստուգաբանության տպագրումն ավարտելուց հետո, և նրա հպանցիկ վերանայման ժամանակ գտա որոշ հավասարումներ, որոնք հետագայում կրկին նորովի են վերամշակվել ուրիշների կողմից, հմմտ. *արտասուք* էջ 21, *բամ* էջ 11, (բայց ճի՛շտ տեղը տե՛ս), *երաշտ* էջ 75, *երկնչիմ* էջ 68, *լուցանեմ* էջ 50, *կոր* էջ 31, *մանգ* էջ 79, *մունջ* էջ 34, *շանթ* էջ 29, *չոր* էջ 87, *սուտ* էջ 6, *ցամաք* էջ 48, *ցելում* էջ 47, *փակել* էջ 58, *քերել* էջ 18 և այլն: Սակայն դրանից իմ դատողություններում ոչինչ չի փոխվում:

նարկեցի այդ հարցը (էջ 80-83)՝ հայերենը պետք է դասվի իրանակա՞ն, թե՞ հենց միայն արիական (հնդիրանական) լեզուների թվին: Պատասխանը եղավ այն, որ հայերենը չի պատկանում ո՛չ իրանական, ո՛չ էլ արիական լեզուների շարքին, այլ այն հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է և պարսկերենից փոխառյալ ու սխալմամբ բուն հայերեն համարված բառերի հիման վրա միայն հանիրավի այսքան ժամանակ դասվել է իրանական լեզուների թվին: Այդպես էլ վճռվեց:

Այս համընդհանուր հարցի վերջնական լուծումից հետո մինչև հիմա բազմաթիվ գիտնականներ են ջանացել շարունակել մասնագիտական հետազոտությունը հայերենի ստուգաբանության և քերականության նկատմամբ, հատկապես Բարթոլոմեն՝ իր «Նյութեր հայերենի հնչյունաբանության վերաբերյալ» հոդվածում՝ BB.10, 1886, հնդեվրոպական լեզվի պատմության ուսումնասիրություններում, պրակ.2 (հնդեվրոպական *սկ*-ն և *սք*-ն, էջ 1-60), 1891, «Հայերեն *ա* > հունարեն ο և հնդեվրոպական ձայնավորների շարքը» հոդվածում՝ BB 17, 1891, Ֆր. Մյուլլերն իր Armeniaca VI-ում, SWAW. 1890 և իր բազմաթիվ քննարկումներում՝ WZKM. 5-10, 1891-1896, *Սոֆուս Բուգգեն* իր «Հայոց լեզվի ստուգաբանական մեկնաբանությունների նյութեր» հոդվածում, I՝ Քրիստիանիա 1889, II՝ KZ. 32 (էջ 1-87), 1893 (թվագրված՝ հոկտեմբեր 1890), III՝ Հնդեվրոպական հետազոտություններ, 1 (էջ 437-459), 1890 (թվագրված՝ սեպտեմբեր 1891), Մեյեն՝ ստուգաբանությանը, հնչյունաբանությանը և ձևաբանությանը վերաբերող բազմաթիվ հոդվածներում, MSL. 8 և 9, 1894-1896, Հնդեվրոպական հետազոտություններ 5, էջ 329..., 1895 թ.: Ինչպես նաև տողերիս հեղինակը՝ «Սեմական փոխառյալ բառերը հին հայերենում», ZDMG. 46, 1892, Բրոքելմանը՝ «Հունարեն օտար բառերը հայերենում», ZDMG. 47, 1893:

Սույն «Հայերենի ստուգաբանության» նպատակն է՝ հավաքել հավաստի արդյունքները, ինչին նպատակամղվել է թվարկված գիտնականների և նրանց նախորդների հետազոտությունը հայերենի ստուգաբանության բնագավառում, և առանձնացնել մեկնաբանված լեզվական նյութը՝ ըստ ծագումնաբանության: Ես էլ կարող էի ստուգաբանության ամբողջ նյութը հավաքել, մանրակրկիտ քննարկել և ճշգրիտ համարվածը ևս մի անգամ

համադրել, ինչպես դա արել է Լագարդն իր «Հայկական ուսումնասիրություններում», սակայն բերել գործնական հիմքեր՝ ընդդեմ այն մեթոդի կրկնության, որը չէ՞ որ ստուգաբանության մյուս ոլորտներում ևս չի կիրառվում և չի էլ կրկնվում: Եվ այդպես, ես իմ խնդիրն եմ համարել՝ ճիշտ ստուգաբանություններն առանձնացնել ամբողջ նյութից և ցանկ կազմել, իսկ սխալ համարվողները՝ անուշադրության մատնել: Բայց ինչպե՞ս են կողմնորոշվում ճշտի և սխալի, հավանականի և ոչ հավանականի արանքում ու կայուն սահման գծում: Թեև փոխառյալ բառերի հանդեպ դա համարյա միշտ էլ հեշտ է լինում, բայց շատ դեպքերում առավել դժվար՝ սեփական բառերի հանդեպ, որոնց նկատմամբ հարցի յուրաքանչյուր քննարկող ամենայն հավանականությամբ սահմանն այլ կերպ կգծեր: Թերևս կարելի է ընդհանրապես ասել, որ ստուգաբանական հավասարումը հավաստի է լինում, եթե՝ 1) համեմատվող բառերի իմաստները լրիվ համընկնում են իրար կամ էլ իրար այնքան մոտ են կանգնած, որ նրանք տրամաբանորեն կամ լեզվական համաբանություններով առանց այլևայլի ընկալվում են: 2) Հնչյունները ոչ միայն ամբողջությամբ՝ իրենց ձևով ու հերթականությամբ, այլ նաև առանձին-առանձին վերցրած համընկնում են՝ ընդունված հնչյունափոխության օրենքներին համապատասխան: Այդ ընթացքում թույլ տրված հնչյունափոխության օրենքի առանձին խախտումներ շատ կարևոր նշանակություն չեն ունենում, եթե միայն բառերը ձևով ու նշանակությամբ առհասարակ նույնական են լինում (ինչպես, օրինակ՝ սանսկր. *hṛd-* -սիրտ՝ հնդեվր. * *g^{l}hṛd-* ից = լատ. *cord- -սիրտ*՝ հնդեվր. **k^{l}rd-* -ից), մինչդեռ շեղվող իմաստի պարագայում հնչյունների կատարյալ նույնությունն անգամ դեռ ոչինչ չի նշանակում (համմտ. սանսկր. *çrad-dhā -վստահություն* ≠ լատ. *cord- -սիրտ*): Առանձին դժվար դեպքերում վճիռ կայացնելիս, սակայն, այս համընդհանուր ֆրազները շատ հաճախ դադարում են գործելուց, և հավաստումները ելնում են իրար դեմ, մինչև որ վիճարկելի հարցը վճռվում է նոր դիտարկումներով: Ընդ որում այստեղ, ուր խոսվում է հայերեն և հնդեվրոպական բառերի համեմատության մասին, մասնակցություն են ունենում երկու ծանրացուցիչ հանգամանք: Նախ՝ հնդեվրոպական տարբեր և կարևոր լեզուների համար դեռևս չկան ստուգաբանության այն օժանդակ միջոցները, որոնք, կանգնած լինելով նորագույն հետազոտությունների բարձունքի վրա,

կկարողանային սահմանափակել ստուգաբանական կամայականությունները և ամրապնդել մեր գիտության հիմունքները: Երկրորդ՝ հայերենի հնչյունային հարաբերություններն ուսումնասիրված են դեռևս ոչ բոլոր կողմերից, հնչյունային օրենքները պարզված են մասամբ և ոչ միշտ բավական հավաստի՝ ստուգաբանության համակցությանը տալու չափից ավելի լայն ասպարեզ, իսկ քննադատությանը՝ մերժելու այն օժանդակությունը, որն այդ օրենքները ցուցաբերում են նրան մյուս բնագավառներում:

Մինչ հայերենի հնչյունաբանության բազմազան հարցեր հաջողությամբ քննարկվում էին Մեյեի և հատկապես Բարթոլոմեի կողմից, Մեյեն ու Ֆր. Մյուլլերը նպաստում էին ստուգաբանությանը, Բուգգեն էր, որ սովորական սրամտությամբ և խորագիտակությամբ հնարավորինս ընդգրկուն հետազոտեց երկու բնագավառներն էլ և մշակեց նոր ստուգաբանությունների ու հնչյունափոխության օրենքների մի մեծ քանակություն, որոնք, եթե ճիշտ լինեին, կգերազանցեին նախորդների աշխատանքները և կնշանավորվեին նշանակալի առաջընթացով: Բայց հենց այստեղ էլ ծառանում է այն դժվարին խնդիրը, թե արդյոք նրանք ճիշտ են. եթե ոչ բոլորը, ապա գոնե գերակշիռ մեծամասնությունը: Իմ աչառու տեսակետը, որ բնականաբար միայն նոր հետազոտությունների համածայն կարող է համարվել դիպուկ կամ վրեպ, այն է, որ առանձին ստուգաբանություններ ճիշտ են և արդեն վերջիններիս առնչությամբ Բուգգեի աշխատանքներն արտակարգ շնորհակալ գործ են, բայց որ մեծ մասը պետք է դիտարկվեն եթե ոչ որպես սխալ, ապա գոնե առայժմ որպես ոչ հավաստի: Տրամաբանական է միայն, եթե ես այն ստուգաբանությունների վրա հիմնված հնչյունափոխության օրենքները համարեմ նույնպես ոչ հավաստի և ըստ այդմ չկարողանամ ընդունել, որ նրանք՝ ստուգաբանություններն ու հնչյունափոխության օրենքները, նեցուկ են միմյանց: Ուստի և ես հարկադրված որոշել եմ հրաժարվել այդ ստուգաբանությունների զգալի մասն այս աշխատության մեջ ընդգրկելուց, անշուշտ ոչ առանց ծանր խորհրդածությունների, քանի որ նրանք ոչ թե ինչ-որ մեկի դյուրին աշխատանքն են, այլ աչքի ընկնող գիտնականի հիմնավոր հետազոտությունների պտուղը: Իսկ եթե իմ որոշումն այնուամենայնիվ հիմնականում պետք է լիներ ճշմարիտը, ապա դա մեկնաբանելու համար թերևս անհրաժեշտ է ընդունել, որ հայերենի ստուգաբանության դաշտը, ինչ նա բազմապատիկ մշակման է ենթարկվել, դադարել է

առաջվա նման արգասավոր ու բեղուն լինելուց: Բայց պե՞տք է, որ մենք լեզվի մյուս բնագավառներում ևս բարենպաստ պայմաններում նույն դառը փորձն ունենանք: Այնուամենայնիվ, պետք է հուսալ, որ մենք (եթե միայն տքնաջանորեն ու աստիճանաբար) հայերենի ստուգաբանության հետազոտության մեջ հետագա առաջընթացներ կունենանք, ինչպիսիք փաստորեն եղել են նաև վերջերս Բուգգեի, Ֆր. Մյուլլերի և Մեյեի շնորհիվ առավել սահմանափակ ծավալով: Բայց ես կարծում եմ, որ դրանում մեզ համար մեծապես օգտակար կլինի հայերենի ողջ լեզվական նյութի՝ արմատական բառերի, վերջածանցների, նախածանցների մի ակնառու զուգադրում, ինչպիսին ես այն պլանավորել եմ այս աշխատության երկրորդ մասի համար: Նրանում նաև առիթ կներկայանա հակիրճ նշել իմ կողմից այստեղ չընդգրկված ստուգաբանությունները, որպեսզի ապագա հետազոտողները կարողանան ուշադրություն դարձնել դրանց վրա, ստուգել և, նրանց ճշտությունը պարզվելու դեպքում, ընդունել դրանք: Իմիջիայլոց ինքս այս մասում ուշադրության եմ առել ու քննարկել որոշ կասկածներ, որոնք պարզապես չեմ ուզեցել շրջանցել, և որոշ սխալներ, որոնք մշտապես ուզեցել եմ վերացնել:

Վերը նշվածից հետևում է, որ հայերենի ստուգաբանությունների իմ ժողովածուն չի առաջադրում բացարձակ ամբողջականության պահանջ, բայց թերևս սահմանափակության մեջ առաջադրում է ճշգրիտ ստուգաբանությունների պահանջ: Հետևաբար, ով այստեղ չի գտնում նախկինում տրված բացատրությունը, թող ընդունի, որ այն ոչ թե վրիպել է իմ ուշադրությունից, այլ որ ես այն սխալ եմ համարում[1], և թող զսպի իր կշտամբանքը, քանի դեռ չի ապացուցվել իմ այս դատողությունների անհիմն լինելը: Այսուհետ ևս իմ ժողովածուն նպատակ չունի կազմել ո՛չ հազվադեպ ի հայտ եկող հունարեն օտար բառերի (տե՛ս ստորև էջ 324), ո՛չ էլ ուշ և արդի հայերենի բառապաշարի մեջ մտնող արաբերեն, թուրքերեն, նոր պարսկերեն, լատիներեն ու ֆրան-

1) Սա ի ուշադրություն պարոն Մեննեվիշյանի, ով (Հանդէս ամսօրեայ, 1896, էջ 183) թերի է համարում իմ հավաքածուները, քանի որ չկան, օրինակ, հետևյալ ստուգաբանությունները՝ հայ. *աղիւս*=նոր պարսկ. *āxiz* կրաշաղախ (ըստ Վուլլերսի՝ lutum e quo lateres conficiunt, caementum և այլն), հայ. *ածուխ*= նպ. *āzax*, ըստ Վուլլերսի՝ putamen vitis, sarmentum կամ *āzuy*, *āzōy-putatio arboris, ramus* և այլն, հայ. *ակիշ* (կեռ կրակխառնիչ)= նպ. *ākiš* (?Վուլլերսի մոտ միայն āgēš suspensus) կամ *āgūj, ākaj, ākanj* - uncus, hamus, harpago: Լավ չէր լինի, եթե ես ներառեի նման ստուգաբանություններ:

սերեն փոխառյալ բառերի ամբողջական ցանկը, քանի որ, ինչպես նշել եմ (ստորև էջ 280)[1], այդ բառերի մեծ մասը առանձնահատուկ հետաքրքրություն չի ներկայացնում, և իմ աշխատանքի նյութը պետք է լինի առհասարակ ոչ թե միջին և նոր հայերենը, այլ հիմնականում հին հայերենը: Այս երիտասարդ լեզուն էլ, անշուշտ, ունի հնում փոխառյալ կամ հնագույն հայերեն որոշ բառեր, որոնք լոկ պատահականորեն չեն վկայակոչվել գրականության մեջ, որը կարող է սակայն խնդրո առարկա լինել միայն այն դեպքում, երբ մենք կունենանք այդ գրականության բառագանձի վստահելի ժողովածուն, որը ցայժմ չի եղել:

Հայերեն բառերն իրենց ծագումնաբանությամբ ես բաժանել եմ փոխառյալների և սեփականների, իսկ փոխառյալ բառերի հետագա բաժանումը հատուկ գլուխների կատարել եմ՝ կախված հետևյալից՝ ոչ թե վերջին ինստանցիայում որտեղից են նրանք սերում, այլ թե ո՛ր լեզվից է հայերենը դրանք անմիջականորեն վերցրել: Ուրեմն, ինչպես ինքս եմ ընդունում, օրինակ, եթե *փիլիսոփայ* բառն անմիջականորեն գալիս է ասորերենից, ապա այն պետք է նշվեր ասորերեն փոխառյալ բառերի տակ (տե՛ս էջ 317), թեև ասորացիք այն փոխառել են միայն հունարենից, մինչդեռ անմիջականորեն հունարենից վերցված *փիլիսոփոս* բառը գրված է հունարեն փոխառյալ բառերի տակ (էջ 386): Առանձին գլուխներում տարբեր պատճառներով ես ներկայիս համար այբբենական կարգը գերադասել եմ ըստ իմաստի՝ առավել հետաքրքիր կարգից: Փոխառյալ բառերի համար բերված գրական օրինակները էջ 3-8-ի վրա տրված հապավումների աղյուսակի օգնությամբ պետք է պատասխան տան այն հարցերին, թե որ դարում է հնարավոր գտնել փոխառյալ բառերը, թե գործածության ինչ հաճախականություն ունեն նրանք, նրանք արմատացա՞ծ փոխառյալ բառեր են, թե՞ գիտական օտար բառեր: Առաջիններին հավելված է «հին և հաճախ» նշումը, կամ գրական օրինակների վերջում գրված է «և այլն», վերջինների մոտ բերված է միայն մեկ կամ

1) Այդ առնչությամբ Ֆր. Մյուլլերը (WZKM. 10, 278) անարդարացիորեն նկատում է բառերից մեկի բացակայությունն ինձ մոտ՝ հայ. *չուշմիր* (հիմ)=նպ. *šūšmīr*, *šumšīr* cardamomum minus: Սանավանդ որ այդ բառը ես գտնում եմ միայն Պետրոսյանի բառարանում *(Մադաքեա Պետրոսեան*, Նոր բառգիրք անգլերէն-հայերէն, Վենետիկ, 1875), որը ոչ մի տեղեկանք չի տալիս:

երկու գրական օրինակ՝ առանց հավելումի[1] (տե՛ս ստորև՝ էջ 338): Հեղինակների անունները ես տվել եմ միայն այս վերջին դարում (Բուգգեի, Ֆր. Մյուլլերի և Մեյեի կողմից) վերջերս հավելված ստուգաբանությունների մոտ:

Ես սիրով կհիմնավորեի *ւ*-ի և *վ*-ի, ինչպես նաև նրանց հետ կապվող ձայնավորների *(աւ, ավ, եւ, եվ* և այլն) հայկական նշանների իմ տառադարձումը, որպեսզի հիմնավորեմ, որ վերջինս այնքան էլ կամայական չէ, ինչպես դա կարող է թվալ նրան, ով նկատի է առնում միայն հայերեն գիրը և ոչ թե ավանդաբար եկած կամ էլ բացահայտվելիք արտասանությունը: Բայց քանի որ հնարավոր չէ դա համառոտ շարադրել, ես այն հետաձգում եմ մեկ այլ առիթի համար: Միայն թե այստեղ պետք է Բրուգմանի՝ «Տառադարձության սահմանափակության» վերաբերյալ կատարած խելացի դիտողությունների կապակցությամբ նկատել, որ այդ սահմանափակությունից դուրս գալու ելքը դեռ երկար տարիներ առաջ - դժբախտաբար անհետևանք - ցույց է տվել Լեփսիուսը՝ շարունակաբար հանիրավի աչքաթող արված իր «Ստանդարտ այբուբեն»-ում (2-րդ հրատարակություն, Լոնդոն, Բեռլին, 1863), և որ, երբ արդեն զգացվում է ներկայիս իրավիճակի անկայունությունը, թերևս շուտով կգա ժամանակը՝ Լեփսիուսի հրաշալի աշխատության վերանայումով գտնելու այնպիսի «հեղինակավոր գրելաձև», որին կամավոր կենթարկվեին խելամիտները:

Այս ստուգաբանության առաջին կեսը (էջ 1-280) տպարան է հանձնվել 1895 թ. մոտավորապես զատկին և լույս է տեսել նույն թվականի նոյեմբերին: Ուստի Յուստի «Իրանական անունների գիրքը», որն իմ ձեռքն է ընկել միայն այս առաջին կեսն ավարտելիս, այլևս հնարավոր չի եղել օգտագործել իմ կողմից առաջին հատվածում քննարկվող անունների համար:

Ստրասբուրգ, մարտ 1897:

Հ. Հյուբշման

---

1) Հմմտ. օրինակ՝ *աթաշ* (էջ 92), *բարսմունք* (էջ 119), *կոտակ* (էջ 173), *վզուրկ* (էջ 246) և այլն:

Ծանոթագրություններ

Ա. Տառադարձում: Բ. Հապավումներ

Ա. Հայերենի տառադարձության մասին ես խոսել եմ ZDMG.-ում՝ 30, 53..., ինչպես նաև իմ «Իրանական լեզուների և հայերենի տառադարձությունը» աշխատության մեջ, Լայպցիգ, 1882: Վերջինիս մեջ արված առաջարկությունները ես հիմա էլ համարում եմ նպատակահարմար, իսկ նրանց հիմնավորումը՝ ճիշտ, և ինչ ես նրանք նորից ու նորից ստուգել ու փորձել եմ և համեմատել այլոց առաջարկությունների հետ, առավելությունը տալիս եմ իմ առաջարկություններին: Միայն թե ես հիմա տառադարձում եմ *ը*-ն վերջերս Իրանի տարածքում այնքան ժողովրդական դարձած *ə* նշանով[1], ապա *դ*-ն *δ*-ով (կոկորդային *l*-ով), այլևս ոչ *λ*-ով՝ հունական և լատինական նշանների միախառնումից խուսափելու նպատակով, այնուհետև *ռ*-ն *ṙ*-ով, և ոչ թե *r*-ով՝ չառաջացնելու այն տպավորությունը, որ իբր առկա է քիմքային *γ*-ն, և վերջապես *օ*-ն (որը 12-րդ դարում ի հայտ է գալիս հին *աւ*-ի փոխարեն)՝ *ȯ*-ով՝ ի տարբերություն *ով*-ի, որը *ō* է, որով պետք է որ հատկապես հունարենում վերարտադրվի հունական *ω*-ն: Իմիջիայլոց ես խնդրում եմ ուշադրություն դարձնել, որ իմ տառադարձումը չպետք է լինի փոխարինող կամ սուռոգատ՝ հայերեն բնօրինակ այբուբենի համար, որը ես կիրառում եմ նրա կողքին. ավելին, իմ տառադարձության նպատակն է՝ հնարավորինս ճշգրիտ ուսուցանել հին հայերենի արտասանությունը, որքանով որ ես այն կկարողանամ բացահայտել իմ տրամադրության տակ գտնվող միջոցներով: Բայց դա ինձ բոլորովին էլ չի պարտադրում միշտ կառչած մնալ բնօրինակ գրությանը, այլ ես պետք է նրանից խուսափեմ, երբ համոզված կլինեմ, որ այն չի համընկնում արտասանությանը: Այն, որ մենք չենք կարող հավաստի բացահայտել որոշ հնչյունների և հնչյունների միացությունների հին արտասանությունը, համենայնդեպս առաջացնում է դժվարություն, որը, սակայն, պետք է

1) Բայց ո՞ր նշանը պետք է վերցնել նրա փոխարեն, երբ այն պիտի գրվի մեծատառով, օրինակ՝ որպես հայկական անձնանունների սկզբնահնչյուն:

միայն շրջանցել և ոչ թե լուծել, երբ անտեսելով տառադարձումը գործածում ես միայն բնօրինակ գրությունը: Տառադարձմամբ անընդհատ խթանվում և բարձրացվում է արտասանության հարցը. բայց թե լեզվաբանության խնդիրներից մեկն էլ մեռյալ լեզուների արտասանությունը բացահայտելն է: Բանն այն է, որ այս գիտության իսկական առարկան ոչ թե գրավոր, այլ խոսակցական լեզուն է:

Հին հայերենի արտասանությանը ես կանդրադառնամ հետագայում, այստեղ տալիս եմ միայն այն տառադարձությունը, որը նշված տեսակետների համաձայն կիրառելու եմ ստորև: Ընդ որում ես պահպանում եմ հայերեն այբուբենի ավանդական հերթականությունը և վերջում ավելացնում երկհնչյունները.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ
a	*b*	*g*	*d*	*e*	*z*	*ē*	*ə*	*t̕*	*ž*	*i*	*l*	*x*	*c(=ts)*	*k*

հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ
h	*j(=dz)*	*ł*	*č(=tš)*	*m*	*y*	*n*	*š*	*o*	*č̣(=t̕š)*	*p*	*ǰ(=dž)*	*ṙ*

ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	օ
s	*v*	*t*	*r*	*c̣(=t̕s)*	*v, u*	*p̕*	*k̕*	*ō*

ով - բուն հայերեն բառերում =*ov*, հունարեն[1] բառերում =*ō*,
ու - բաղաձայններից առաջ = *u*, ձայնավորներից առաջ = *v*[2],
ոյ - բաղաձայններից առաջ = *oi*, ձայնավորներից առաջ և որպես վերջնահնչյուն = *oy*,
այ - բաղաձայններից առաջ = *ai*, ձայնավորներից առաջ և որպես վերջնահնչյուն = *ay*,
աւ - բաղաձայններից առաջ[3] = *au*, ձայնավորներից առաջ և որպես վերջնահնչյուն = *av*,
իւ - բաղաձայններից առաջ = *iu*, որպես վերջնահնչյուն = *iv*[4],
եա = *ea*:

1) Այսինքն՝ հունարեն մատենագրություններից վերցված անունների մեջ, որտեղ կա *ω*, որը վերարտադրվում է *ով*-ով՝ այն տարբերակելու հունարեն *o*-ից, որը հավասար է հայերեն *ո*-ին:

2) Բացառությամբ *-ու*-ով վերջավորվող ներկայի հիմքից կազմվող անցյալ ձևերի (ինչպես՝ *զեմուի*) և մի շարք աստվածաշնչային անձնանունների (*Մանուէլ*, *Սամուէլ*, *Փանուէլ*), որոնցում այն նաև ձայնավորից առաջ պետք է արտասանել *ու*:

3) 12-րդ դարում բաղաձայններից առաջ *աւ*-ի փոխարեն գործածության մեջ է մտնում *օ*-ն =*ō* բացառությամբ *աղաւնի* և *նաւթ* բառերի:

4) Այսպես՝ վերացական վերջածանց *ութիւն* =*ություն*, *թիւ* =*թիվ*, բայց *թիվ*-ը որոշյալ հոդով՝ *թիւն*=*թիվն*:

Բ. Բացի գործնական հապավումներից, ինչպես KZ., ZDMG., WZKM. և այլն, ես այստեղ օգտվում եմ նաև հետևյալներից.

Achund. = Ախունդով, Աբու Մանսուր Մուվաֆակի դեղաբանության հիմունքները, Հալլե, 1893, Առանձնացված արտատիպ:

Ag. = Ագաթանգեղոս, Պատմություն (հայերեն), Վենետիկ, 1862: 5-րդ դար:

gr. Ag. = Ագաթանգեղոսը և Գրիգոր Հայաստանցու թղթերը (հունարեն), հրատ.՝ Լագարդ, Գյոթինգեն, 1887:

alt. Wb. = Մխիթարյանների կողմից վկայակոչվող հին հայերեն բառարան:

A. M. = Աբու Մանսուր Մուվաֆակ, Դեղաբանության հիմունքների գիրք (պարսկերեն), հրատ.՝ Զելիգման, Վիեննա, 1859:

Anan. Shirak = Անանիա Շիրակացի, Մնացորդք բանից (հայերեն), հրատ.՝ Պատկանյան, Պետերբուրգ, 1877: 7-րդ դար:

Apc. = Ապոկալիպս («Հայտնություն», «Նոր կտակարան») (հայերեն): 12-րդ դար:

Arg. = Պատմություն Առաքելոց (հայերեն): 5-րդ դար:

Arist. = Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն (հայերեն), Վենետիկ, 1844: 11-րդ դար:

Art. Vir. = Արդա Վիրաֆի գիրքը, Բոմբեյ, 1872:

A. St. = Լագարդ, Հայկական ուսումնասիրություններ, Գյոթինգեն, 1877:

A. T. = Հին կտակարան (հայերեն), Վենետիկ, 1805: 5-րդ դար:

A. v. G. = Ալֆրեդ ֆոն Գուտշմիդ, Իրանի և նրա հարակից երկրների պատմություն, Թյուբինգեն, 1888:

Axtark՛ = (Աստղերի պատկերներ), աստղագիտական գրքույկ, միջին հայերեն:

Barb. = Բարբիե դը Մեյնար, Dictionnaire géographique etc. de la Perse, Փարիզ, 1861:

Basil. = Բարսեղ Մեծ, Վեցօրեից (հայերեն), Վենետիկ, 1830: 5-րդ դար:

BB IV = Բեցենբերգեր, Հնդեվրոպական լեզուների տեղեկագրի նյութեր, հ. IV (Նյոլդեքե, Պատմություն Արտախշիր ի Պապական):

Bdh. = Բունդեհեշ, հրատարակիչ՝ Յուստի, Լայպցիգ, 1868:

C. = Զախջախյան, Dizionario armeno-italiano (Հայ-իտալերեն բառարան), Վենետիկ, 1837:

Car. = Ճառընտիրք (հայերեն): Հին ժամանակներից մինչև 13-րդ դար:

Chron. = Քրոնիկոն Հին կտակարանում (հայերեն): 5-րդ դար:

Cyrill. = Կյուրեղ Երուսաղեմացի, Կարգադրություն: 5-րդ դար:

David = Դավիթ Փիլիսոփա (=Դավիթ Անհաղթ), Թարգմանություններ Արիստոտելից, Պորփյուրից և այլն, Վենետիկ, 1833: 5-րդ դար և այդուհետ:

Deut. = Deuteronomium (=Երկրորդ օրենք = Մովսեսի 5-րդ գիրքը,- *ծանոթ.՝ թարգմանչի)* (հայերեն): 5-րդ դար:

El. = Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (հայերեն), Վենետիկ, 1859: 5-րդ դար:

Ephes. = Նամակ եփեսոսցիներին (հայերեն): 5-րդ դար:

Ephrem. = Սբ. Եփրեմի երկերը (հայերեն), Վենետիկ, 1836: 5-րդ դար:

Erznk. = Երզնկացի, Քերականություն, Մատթեոսի և այլոց մեկնաբանությունը: 13-14-րդ դդ.:

Euseb. = Եվսեբիոս, «Քրոնիկոն» և «Եկեղեցական պատմություն» (հայերեն): 5-րդ դար:

Ex. = Exodus («Ելք») (հայերեն): 5-րդ դար:

Ezech. = Եզեկիել (հայերեն): 5-րդ դար:

Eznik = Եզնիկ, Եղծ աղանդոց (հայերեն), Վենետիկ, 1826: 5-րդ դար:

FB. = Փավստոս Բուզանդ, Պատմություն (հայերեն), Վենետիկ, 1832: 5-րդ դար:

Fird. = Ֆիրդուսի, հրատ.՝ Վուլլերս:

Fraenkel = Ֆրենկել, Արամեերեն օտար բառերը արաբերենում, Լեյդեն, 1886:

Gal. = Նամակ գաղատացիներին (հայերեն): 5-րդ դար:

Ganj. = Ganjeshāyagān, Andarze Ātrepāt Mārāspandān, Mādigāne Chatrang and Andarze Khusroe Kavātān, by Peshutan Dastur Behramji Sanjana, Բոմբեյ, 1885:

Ganjaran = Գանձարան՝ Նարեկացու (10-րդ դար), Շնորհալու (12-րդ դար) և հետնորդների եկեղեցական երգերի ժողովածու:

Gen. = Գենետիկա (Ծագումնաբանություն) (հայերեն): 5-րդ դար:

Geop. = Գիրք վաստակոց, Geoponica (միջին հայերեն), Վենետիկ, 1877, 13-րդ դար (կամ 12-րդ դար ?, տե՛ս Հանդէս ամսօրեայ, 1889, էջ 2):

Ges. Abh. = Լագարդ, Հոդվածների ժողովածու, Լայպցիգ, 1866:

Gesch. Georg. = Վրաց պատմություն (թարգմանված վրացերենից հայերեն), Վենետիկ, 1884: 11-րդ և 13-րդ դարերի միջև:

Gl. and Ind. = Glossary and Index of the Pahlavi texts և այլն, հրատ. է. Ու. Ուեսթ, Բոմբեյ - Լոնդոն, 1874:

Guj. Ab. = Barthelemy, Gujastak Abalish, Փարիզ, 1887:

Hebr. = Նամակ եբրայեցիներին (հայերեն), 5-րդ դար:

Hoffmann = Գ. Հոֆման, Քաղվածքներ պարսիկ մարտիրոսների ասորական փաստաթղթերից, Լայպցիգ, 1880:

Horn, Grdr. = Հորն, Ակնարկ նոր պարսկերեն ստուգաբանության, Ստրասբուրգ, 1893:

Horn, Sieg. = Հորն, Սասանյան կնքաքարեր, Բեռլին, 1891:

Jac. Nisib. = Հակոբ Նիսիբեցի (Wb.-ում սխալ է, պետք է լինի Հրահատ), Ճառեր: 5-րդ դար:

Jaism. = Հայսմավուրք (Վարք Սրբոց), 13-14-րդ դդ.:

Jerem. = Երեմիա (հայերեն): 5-րդ դար:

Jes. = Եսայի (հայերեն): 5-րդ դար:

Joh. = Հովհաննեսի Ավետարան (հայերեն): 5-րդ դար:

Joh. Kath. = Հովհաննես Կաթողիկոս, Պատմություն (հայերեն), Մոսկվա, 1853: 10-րդ դար:

Joh. Mam. = Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմությունը (հայերեն), Վենետիկ, 1832: 7-րդ դար:

Joh. Phil. = Հովհաննես Իմաստասեր (Օձնեցի) (հայերեն), Վենետիկ, 1834: 8-րդ դար:

Joh. Van. = Հովհաննես Վարդապետ, անվ. Վանական (հայերեն): 13-րդ դար:

Kanon = Կանոններ (հայերեն): 5-8-րդ դար:

Kg. = Գիրք թագավորաց (հայերեն): 5-րդ դար:

Kir. = Կիրակոս Գանձակեցի, Պատմություն (հայերեն), Վենետիկ, 1865: 13-րդ դար:

Kor. = Նամակ կորնթցիներին (Պողոս Առաքյալի թուղթը Կորնթի բնակիչներին,- *ծանոթ. թարգմանչի)* (հայերեն): 5-րդ դար:

Koriun = Կորյուն, Սրբ. Մաշտոցի կյանքը, Վենետիկ, 1833: 5-րդ դար:

Lambr. = Ներսես Լամբրոնացի (հայերեն): 12-րդ դար:
Laz. = Ղազար Փարպեցի, Պատմություն (հայերեն), Վենետիկ, 1873: 5-րդ դար:
Leb. d. Väter = Վարք հարանց (հայերեն), Վենետիկ, 1855, կրկնակի գրախոսականով, հինը 5-րդ դարից, նորը՝ մինչև 12-րդ դար:
Lev. = Leviticus (Խրատ) (հայերեն): 5-րդ դար:
Levond = Ղևոնդ Մեծ, Ղևոնդ պատմիչ, Արաբների ներխուժումը (հայերեն), Փարիզ, 1857: 8-րդ դար:
Luc. = Ղուկասի Ավետարան (հայերեն): 5-րդ դար:
Maccab. = Մակաբայեցիք (հայերեն): 5-րդ դար:
Magistr. = Գրիգոր Մագիստրոս, Նամակներ և այլն (հայերեն): 11-րդ դար:
Mal. = Մաղաքիա Աբեղա, Պատմություն (հայերեն): 13-րդ դար:
Martin = Ֆրա Մարթին (հայերեն թարգմանություններ): 14-րդ դար:
Mašt. = Մաշտոց (հայկական ծիսակատարություն): Սկսած 5-րդ դարից:
Mc. = Մարկոսի Ավետարան (հայերեն): 5-րդ դար:
Mech. = Մխիթար Գոշ, «Առակներ» և «Դատաստանագիրք» (հայերեն): 12-րդ դար:
Mech. d. Arzt = Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն (հայերեն): 1184 թվից:
Med. Schr. = 13-15-րդ դարերի բժշկագիտական երկեր:
MGg. = Մովսեսի Աշխարհացույցը, Վենետիկ, 1865, հրատ.՝ Ջուքրի, Վենետիկ, 1881, հրատ.՝ Պատկանյան, Պետերբուրգ, 1877 (հայերեն): 7-րդ դար?:
Michael = Միխայիլ Ասորի, Քրոնիկոն (հայերեն), Երուսաղեմ, 1870: 13-րդ դար:
Min. = Ուեսք, The Book of the Mainyo-i-khard, Շտուտգարթ-Լոնդոն, 1871:
Min. Gl. = Նախորդի բացատրական բառարանը:
Mos. Kal. = Մովսես Կաղանկատվացի, Ալբանիայի (Աղվանքի) պատմությունը, Փարիզ, 1860, Մոսկվա, 1860 (հայերեն): 7-րդ դար, վերջին 3-րդ գիրքը՝ 9-10-րդ դդ.:
Mt. = Մատթեոսի Ավետարանը (հայերեն): 5-րդ դար:
Mt. Urh. = Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն (հայերեն): 12-րդ դար:

MX. = Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (հայերեն), Վենետիկ, 1865: 5-րդ դար (ըստ Կարիերի՝ 7-8-րդ դդ.):

Narek. = Գրիգոր Նարեկացու երկերը (հայերեն), Վենետիկ,1840: 10-րդ դար:

Nöld. Aufs. = Նյոլդեքե, Շարադրանք պարսից պատմության, Լայպցիգ, 1887:

„ Stud. = Նյոլդեքե, Պարսկերենի ուսումնասիրություններ I, Վիեննա, 1888, II՝ Վիեննա, 1892:

„ syr. Chron. = Նյոլդեքե, Գուիդիի հրատարակած ասորերեն քրոնիկները՝ թարգմանված ու մեկնաբանված, Վիեննա, 1893:

N. P. = Սրբ. Ներսես Պարթևի պատմությունը, երեց Մեսրոպը (հայերեն), Վենետիկ, 1853, 10-րդ դար:

N. T. = Նոր կտակարան (հայերեն), Վենետիկ, 1877: 5-րդ դար (բացի Apc.-ից):

Num. = Թվեր (հայերեն): 5-րդ դար:

Oskiph. = Ոսկեփորիկ (մանրապատումներ, հայերեն): 12-րդ դարից հետո:

Osk. Mt. Joh. Es. Paul. = Ոսկեբերան, Մատթեոսի, Հովհաննու (մինչև 13-րդ ճառը), Եսայու, Պողոսի նամակների մեկնությունը (հայերեն), Վենետիկ, 1826-1880: 5-րդ դար:

Patk. I und II = Патканян, Материалы для армянского словаря, Петербург, 1882-1884:

Petr. = Պետրոսի նամակները (հայերեն): 5-րդ դար:

Phl. Min. = Անդրեաս, The Book of the Mainyo-i-khard, Քիլ, 1882:

Pit. = Մովսես Խորենացի (?), Յաղագս պիտոյից (հայերեն), Վենետիկ, 1865: 5-րդ դար (?):

P. N. = Pand-nāma i Ādarbād Mārāspand, by Herbad Sheriarjee Dadabhoy, Բոմբեյ, 1869:

PPGL. = An old Pahlavi - Pazand Glossary, Բոմբեյ-Լոնդոն, 1870:

Pred. Sal. = Սողոմոն Քարոզիչ (հայերեն): 5-րդ դար:

Pseud. = Կեղծ-Կալիսթենես, Աղեքսանդրի պատմությունը, (հայերեն), Վենետիկ, 1842: 5-րդ դար:

P. St. = Յուբշման, Պարսկական ուսումնասիրություններ, Ստրասբուրգ, 1895:

